ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 322 - Ա **02 մայիսի 2016 թ.**

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱԽՄԱՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.19-րդ կետերի պահանջներով

որոշում եմ՝

Հաստատել՝

1. Մայիսյան հաղթանակներին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շախմատի 2016 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Մայիսյան հաղթանակներին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շախմատի 2016 թվականի մարզային առաջնության կանոնակարգը՝ համաձայն N2 հավելվածի:
3. Մայիսյան հաղթանակներին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շախմատի 2016 թվականի մարզային առաջնության անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N3 հավելվածի:
4. Կազմկոմիտեին՝
   1) ապահովել միջոցառման անցկացման մասսայականությունը.
   2) միջոցառման ավարտից հետո ներկայացնել գրավոր հաշվետվություն:
5. Սույն որոշման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N1
<< Գեղարքունիքի մարզպետի
2016 թվականի մայիսի 2 -ի
N 322 - Ա որոշման

ԿԱԶՄ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱԽՄԱՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ

Բաղալյան Գարիկ - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, /նախագահ/

Ասատրյան Իվան – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Պողոսյան Անուշ - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Բավեյան Սաշա. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ

Չարվադարյան Գեղամ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ

Շահբազյան Հասմիկ - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

Խլղաթյան Խոսրով - <<Գեղամա աշխարհ>> թերթի գլխավոր խմբագիր

Առաքելյան Ալեքսան - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ

Աշխատակազմի ղեկավար ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N2
<< Գեղարքունիքի մարզպետի
2016 թվականի մայիսի 2 -ի
N 322-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱԽՄԱՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ

ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Նպաստել համայնքներում շախմատ մարզաձևի մասսայական զարգացմանը
- ի հայտ բերել շնորհալի մարզիկներին՝ նրանց հետագա մարզական կատարելագործումն ապահովելու համար
- հանրապետական մրցումներին մասնակցության ապահովում

ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շախմատի 2016 թվականի մարզային առաջնության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը:

ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ, ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շախմատի մարզային առաջնության տարածքային փուլի մրցումները կանցկացվեն 2016 թվականի մայիսի 3-7-ը, մարզային փուլի մրցումները՝ 2016 թվականի մայիսի 11-ին Գավառի շախմատի տանը:

Մրցումների սկիզբը ժամը 11:00-ին:

ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Մարզային փուլին կմասնակցեն Հայաստանի շախմատի ակադեմիայի Գավառի, Մարտունու, Վարդենիկի, Վարդենիսի, Ճամբարակի, Սևանի և Սարուխանի մասնաճյուղերում կազմակերպված տարածքային մրցումներում 1-ին,

2-րդ և 3-րդ տեղերը գրաված շախմատիստները: Մարզային առաջնությունը կանցկացվի շվեյցարական մրցակարգով: Մարզային առաջնությունն անհատական է: Յուրաքանչյուր խաղացողի տրվում է 25 րոպե մեկ խաղափուլի համար: Առաջնությունը կանցկացվի ՖԻԴԵ-ի կանոնակարգի համաձայն: Մարզային առաջնությունն անցկացնում և արդյունքներն ամփոփում է մրցավարական հանձնաժողովը: Մարզային առաջնությունում առաջին և երկրորդ տեղերը գրաված շախմատիստները կմասնակցեն շախմատի մեծահասակների հանրապետական մրցումներին:

ԾԱԽՍԵՐԸ

Մարզային առաջնության մասնակցության հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախս և սնունդ հոգում են համապատասխան համայքները և կազմակերպությունները:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Մարզային առաջնությունում 1-ին , 2-րդ և 3-րդ տեղ գրաված շախմատիստները կպարգևատրվեն հավաստագրերով և հուշանվերներով:

ՀԱՅՏԵՐԸ

Մարզային առաջնության մասնակցության նախնական հայտերը ներկայացվում են մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն մարզային փուլի մրցումներից 2 օր առաջ, իսկ անվանական հայտերը՝ մրցավարական հանձնաժողովին՝ մրցումների օրը:

Աշխատակազմի ղեկավար ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թվականի մայիսի 2-ի
N 322-Ա որոշման

ԿԱԶՄ

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱԽՄԱՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Չարվադարյան Գեղամ - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ /պատասխանատու/
Հայրապետյան Մերուժան - ՀՀ Գեղարքունիքի մարզում Հայաստանի շախմատի ակադեմիայի ներկայացուցիչ /գլխավոր մրցավար/
Սարգսյան Կարո - Գավառի շախմատի ակադեմիայի մարզիչ /քարտուղար/
Հայրապետյան Արամայիս – Մարտունու շախմատի ակադեմիայի մարզիչ / մրցավար/
Վարդանյան Աշոտ – Սևանի շախմատի ակադեմիայի մարզիչ /մրցավար/
Պետրոսյան Մարգարիտ – Վարդենիսի շախմատի ակադեմիայի մարզիչ/ մրցավար /
Մարտիրոսյան Հակոբ – Ճամբարակի շախմատի ակադեմիայի մարզիչ/մրցավար/
Արզումանյան Սամվել - Վարդենիկի շախմատի ակադեմիայի մարզիչ/ մրցավար/
Թորոյան Գնել - Սարուխանի շախմատի ակադեմիայի մարզիչ/ մրցավար/

Աշխատակազմի ղեկավար՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ